

ԱՋԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

Զ. Գ.

ԱՐԱԲԿԻՐԻ ԳԱԻԱՌԱԲԱՐԲԱՌԸ

ՉԱՅՆԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԹ-ԲԷԿ



Վ Ի Ե Ն Ն Ա

ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

- ԺԱ. Խաչատրեանց Գր., Հայ Արշակունիք ըստ Մովս. Խորենացւոյ, կամ նոր ուսումնասիրութիւններ Մովս. Խորենացւոյ մասին: Թրգմ. Արսէն Ս. Սիմոնեանց: 1906: էջ Ը+124: Ֆր. 1.50
- ԺԲ. Պէդէրուցն Հ., Հայերէն և ղրացի լեզուները: Թրգմ. Հ. Թ. Կէտիկեանց: 1907: էջ ԺԱ+257: Ֆր. 5.—
- ԺԳ. Հիւրչման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները: Թրգմ. Հ. Բ. Պիլէգիլեանց: 1907: էջ ԺԶ+443: Ֆր. 7.—
- ԺԴ. Պէդէրուցն Հ., Հին հայերէն հիցուցական դերանունները: Թրգմ. Հ. Ե. Տաշեան: 1907: էջ Է+90: Ֆր. 2.—
- ԺԵ. Գաշեմքեան Հ. Գ. Վ., Կենսագրութիւն Սարգիս Արքեպիսկոպոսի Սարաֆեան և ժամանակին հայ կաթողիկոսայր: 1908: էջ ԺԳ+433: Ֆր. 6.—
- ԺԶ. Աճառեան Հ., Հայերէն նոր բառեր նորագիտ Մասնորոգաց գրոց մէջ: 1908: էջ 38: Ֆր. —.60
- ԺԷ. Կիւրչեան Բ. Ժ. Վ., Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն: 1909: էջ ԻԸ+458: Ֆր. 7.—
- ԺԸ. Ակիսեան Հ. Ն., Տիմոթէոս Կուղ հայ մատենագրութեան մէջ: էջ 1—60:
- ԺԹ. Աճառեան Հր., Հայերէն նոր բառեր Տիմոթէոս Կուղի Հակածառութեան մէջ: 1909: էջ 16—106: Ֆր. 1.50
- ԺԺ. Ակիսեան Հ. Ն., Չարարիս Եւ. Գնունեաց և իւր տաղերը: 1909: էջ ԺԲ+87: Ֆր. 1.—
- Կ. Ակիսեան Հ. Ն., Կիրթոն Սաթողիկոս վրաց: 1910: էջ ԻԷ+315: Ֆր. 6.—
- ԿԱ. Մեմեկիշեան Հ. Գ. Ժ. Վ., Հայերէն լեզուի ուղղագրութեան ինդիքը: 1910: էջ 73: Ֆր. 1.—
- ԿԲ. Գիւտեքոյ Կ., Բիւզանդիոն և Պարսկաստան և անոնց ղիւմնագիտական և ազգային-իրաւական յարաբերութիւնները Յուստինիանոս ժամանակ: Թրգմ. Հ. Հ. Համբարեան: 1911: էջ Ը+162: Ֆր. 2.50

ԱՐԱՅԿԻՐԻ ԳԱՆԱՌԱՅԱՐԲԱՌԸ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ



ԱՐԱԲԿԻՐԻ ԳԱԽԱՌԱԲԱՐԲԱՌԸ



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1919

491.99.0

7-22

ՀԻՄՆԱԿԱՆ Ե 1961 Ձ.



ԱՐԱԲԿԻՐԻ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՅԸ

ՉՅՅՆԱՐԱՆԱԿԱՆ ԵՐ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀՀ

ԳՐԵՑ


ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԹ-ԲԵԿ



Վ Ի Ե Ն Ն Ա

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919



A $\frac{\text{II}}{13468}$

Մերկայ աշխատութիւնս Ա—Գ մասերով յղած էր մեզ Հեղինակն 1900 թուին: Մոյն տարին արդէն սկսաւ մաս առ մաս հրատարակուիլ Հանդէս Ամսօրեայի մէջ եւ տեւեց մինչեւ 1903 Մոյեմբեր: Որովհետեւ Հեղինակն խոստացած էր յղել խմբագրութեանս շորրորդ մաս մ'ալ, հարկ եղաւ յապաղել արտատպութեան հրատարակութիւնը: Հեղինակին բազմազբաղութիւնն սակայն չներեց գործոյն արագ կատարումը: 1912ին միայն կրցաւ մեր տրամադրութեան տակ ղնել խոստացուած մասն, որ էր Օտար բառեր Արարկիրի բարբառոյն մէջ, ընդարձակ բառացանկ մը թուրքերէն բառերու, որոնք կիրարկուած են նոյն բարբառին մէջ: Թէև Հեղինակին կողմանէ խնամով ուսումնասիրուած գործ մ'էր, ըայց նկատելով մէկ կողմանէ որ այն անհրաժեշտ աղերս չունի Բարբառոյն Ըերականութեան ուսումնա-

սիրութեան հետ եւ միւս կողմանէ տպագրութիւնն ներկայացուած ձեւին մէջ դժուարութեանց կապուած է, հարկ եղաւ ինչքել՝ որ համառօտուի: Չհաւանելով առաջարկութեանս՝ յետս դարձուեցաւ ձեռագիրը: Իրաց այս վիճակին մէջ Բարբառոյն ուսումնասիրութիւնն Հեղինակին գրչէն աւարտած համարելով յետ 10ամեայ յապաղման կը հանենք հրատարակ:

ԽՄԲ. «ՀԱՆԴԻՍԻ»,

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Համեմատելով ուրիշ գաւառաբարբառներու հետ — ինչպէս Մարաշի¹, Չէյթունի, Մուշի², Ասլանպէկի³, Ագուլեցուց⁴ եւն բարբառները — Արաբկերի բարբառը բաւական մօտ է այժմեան գրական կոչուած արեւմտեան բարբառին: Այս երեւոյթը բաւական զարմանալի թուելու է ամէն անոնց որոնք գիտեն թէ ինչ հեռաւորութիւն կը բաժնէ Փոքր-Հայրի այդ քաղաքը այն բազմացեղ եւ բազմալեզու մայրաքաղաքէն որպիսին է Վ. Պոլիս, ուր բաղդի բերմամբ՝ զանազան ազդեցութեան տակ — նախ թրքական եւ յետոյ ֆրանսական մատենագրութեան — ծաղկելու կոչուած էր արեւմտեան հայաբարբառը: Սակայն այդ զարմանքը մասամբ կ'անհետանայ երբ Արաբկերցեաներու ներքին եւ արտաքին կեանքին հետ մի քիչ ծանօթանանք,

¹ Չայնական Ռուսաստանի թիւն Մարաշի բարբառին. Մէլիք Ս. Դուրեմ-Բեի, «Հանդէս Ամսօրեայ» 1896:

² Ռուսաստանի թիւն Մուշի բարբառին. Մուշի-Մուշի Մուշի-Մուշի, 1897:

³ Քննութիւն Ասլանպէկի բարբառին Հ. Յ. Արեւիկեան, «Բազմալեզու» 1898:

⁴ Ագուլեցուց կամ Չոկերու բարբառը. Ս. Սուրբաբեկեան, 1883:

որով կը տեսնենք թէ երեք տարբեր պատճառներ ուժգնապէս նպաստած են անոնց լեզուին մաքրուելուն: Այդ պատճառներն են՝

1. Գպրոցները կամ վարժարանները՝ որոնց թիւը միւս հայաշատ քաղաքներէն շատ աւելի է գուցէ (տես Աշխարհի մասին գործիս) .

2. Արարկերի ժողովրդեան օտար երկիրներ ու զանազան հայախօս քաղաքներ եւ մանաւանդ Ա. Պոլիս յաճախակի երթեւեկութիւնը . եւ

3. Հայ տարրին միւս դրկից տարրներէն անհամեմատ շատութիւնը:

Յիրաւի եթէ գպրոցներու ձեռք մատաղ սերունդին կը սորվեցնէին լուսն հայերէն — գրաբար թէ աշխարհաբար՝ այդ նշանակութիւն չունի — ժամանակաւորապէս գաղթող կամ երթեւեկող ժողովուրդն ալ, վերագառնալով իւր հայրենիքը՝ յԱրարկիր, ցուցամոլութեամբ թէ սովորութենէ դրդեալ, տեսակ մը պատուոյ խնդիր կը համարէր — նոյնը չի պատահիր նաեւ այսօր եւ ամէն տեղ — աւելի մաքուր հայերէն կամ ըստ իւր կարծեաց մաքուր՝ հայերէն մը խօսիլ: Այսպիսով՝ անշարժ ժողովրդեան բարբառը, ենթարկուելով այդ երկու տարբեր հասանքներուն եւ հայ տարրին բացարձակ մեծամասնութեան շնորհիւ ալ ձուներնալով կրելիք ուրիշ ազդեցութիւն մը, ստիպուած էր՝ բնականաբար՝ կամայ եւ յակամայ համակերպիլ բարբառական նորաձեւութեանց, ուստի եւ փոփոխուիլ — ի բարին թէ ի չարն՝ այդ դեռ խնդիր է — :

Այսու հանդերձ Արարկերի բարբառը գլխաւորաբար երեք՝ բայց երկրորդական ազդեցութիւն է կրեր: Թր+ւիւն - զրեցո-նիւն՝ միայն բառագիտութեան մէջ, հետեւանք տիրող պիտութեան բարբառին. -ր-ք-իւն - զրեցո-նիւն՝ զարձեալ բառագիտութեան եւ մանաւանդ ցուցականներու մէջ, որն հետեւանք կարելի է համարել արարախօս երկիրներու մերձաւորութեան եւ Արարկերցւոց յաճախ Եգիպտոս գնալ գալուն. եւ վերջապէս ր-ք-իւն - զրեցո-նիւն՝ միայն առողանութեան մէջ, հետեւանք քրդերու մերձաւորութեան եւ բարեկամութեան տեղացի հայերուն՝ հետ: Եւրկայ ուսումնասիրութիւննս որ արդէն պատրաստ էր 1898ի Յուլիսին եւ որ միայն այսօր՝ երկու տարի յետոյ լոյս կը տեսնէ, — մեզմէ բոլորովին անկախ պատճառներով — վերածուած է երեք գլխաւոր բաժանմունքներու. Ա. Մ-ը կը բովանդակէ Եմոյշներ եւ Արարկերի բարբառին բառագրութիւնը. Բ. Մ-ը՝ Չ-յն-իւն - - - - - ճ-իւն-իւն-ը եւ Գ. Մ-ը՝ գաւառաբարբառիս քեր-իւն-իւն-ը²:

1 Արարկերի Հայերուն եւ քրդերուն յարաբերութիւնները այնքան մօտ են որ կարելի է ըսել թէ հայ տղամարդկանց տանէն եօթը վառ կամ լաւ քրդերէն կը խօսի. իսկ քրդերէն՝ զարմանալի չէ բնաւ՝ շատ շատերուն հանդիպել որոնք Հայերէն կը խօսին. բնականաբար ազաւազեալ Հայերէն մը:

2 Ընթերցողին ապահովութիւն տալու համար, կը յայտնենք թէ մենք այս բարբառը խօսեր ենք մինչեւ մեր 13 տարեկան հասակը, ժամանակ յորում մենք Եւրոպանցանք. իսկ Եւրոպայում նոյն բարբառը գործածեր ենք աճէն անգամ որ առիթ ունեցած ենք. բայց աւելի ապա-

Հետաքրքրութեանց գոհացում տալու համար
Ա. Մասին մէջ, սկիզբը աւելցուցինք նաև աշ-
խարհագրական հատուած մը, որ բաւական կը
ծանօթացնէ ընթերցողին Արարկիր քաղաքը:

Աւելորդ չենք համարիր այստեղ ըսել
թէ Արարկերի բարբառին ուսումնասիրութեան
մեթոտով՝ ընդհուպ (ներկայիս աւարտելէն
յետոյ) սոյն էջերուն մէջ լոյս պիտի տեսնեն
նաև Էճ՝Է՛-Դ՛-Յ՛ (Կեսարիա). Տ՛-Դ՛-Է՛-Ը՛, Ե՛-Զ՛-Է՛-Ը՛,
Ս-Զ՛-Է՛-Ը՛ բարբառներու ուսումնասիրութիւն-
ները, որոնք արդէն պատրաստ են, եւ ուրիշ մի
քանիներ՝ զորս պատրաստելու գլոյս ենք:

Պ ա ր ի ս, 2 Յուլիս 1900:

ՄԵԼԻՔ Ս. ԳԵԼԻՔ-ԲԵԿ

Հոգութեան համար, գտնուելով որ մի գուցէ մեր յիշողու-
թիւնը մեզ պակասած լինի, գիտած ենք՝ կասկածելի զեւ-
րերուն համար. Պր. X . . . ին Արարկիր:

Յ Ա Ն Կ Ն Ի Խ Թ Ո Յ

Ազդ	Էջ	
Ներածութիւն		Ե
Յանկ Նիւթոց		ԺԱ
Մասն Ա. Կոնյէնէր և քարքառագիտութիւն		
Ա. Աշխարհագրական տեսութիւն Արարկերի վրայ		1
Բ. Նմոյշ Արարկերի քարքառին		12
Գ. Առածներ, աստիճաններ, անէծքներ, աւելորդապաշտութիւններ ևն		16
Դ. Բառագիտութիւն		21
Մասն Բ. Չայնական ուսուցման սիրութիւն		
Ա. Տառ և արտասանութիւն		84
Բ. Չայնական փոփոխութիւններ		105
Մասն Գ. Չեկախօսութիւն		
Ա. Բառերու կազմութիւնը		156
Բ. Անուն		192
Գ. Դերանունները		224
Դ. Բայեր		247
Ե. Անփոփոխ բառեր		283



ԱՐԱՅԿԻՐԻ ԳԱՆԱՌԱՅԱՐՅԱՌՁ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ն Մ Ո Յ Յ Ն ԵՐ Ե Ի Բ Ա Ռ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Ի Ի Ն

Ե.

Աշխարհագրական տեսութիւն Արարկիրի վրայ:

Արարկիր՝ Մամուրէթ-Իւլ-Ազիզ կուսակալութեան նշանաւոր եւ բազմամարդ քաղաքներէն մին, ունի մօտաւորապէս 30—35 հազար բնակիչ, որոց առնուազն 20 հազարը հայ, իսկ մնացեալը մահմետական են: Այժմեան քաղաքը որ հազիւ թէ 100 տարիէ աւելի գոյութիւն ունենայ, շինուած է հին քաղաքին քով կամ անոր աւերակներուն վրայ: Հին քաղաքը՝ զոր Հայերը «Ա՜ր՛ի Բ-ը-ր», եւ թուրքերը «Ա՜ր-ի Է-ն-ն-ն» կ'անուանեն եւ որ իւր փառաւոր աւերակներովը հազիւ թէ գիւղ մը կը ներկայացնէ, կը գտնուի քաղաքէն 10—15 վայրկեան հեռու՝ դէպ ի հարաւ-արեւմուտք: Կը պատմուի թէ Արարկիրի¹ հին անունն է եղեր Երոպոլիս² կամ Հիերոպոլիս, որ խիստ

¹ Ար-բիբէի ուղղագրութիւնը շատ փոփոխութեան ենթակայ է. կը գրեն Ար-բիբէ, Ար-բիբ, Ար-դիբ. բայց ընդունելին առաջինն ձեւն է:

² Բիւզանդական պատմութիւնը մեզ կ'իմացնէ թէ կայսրութեան մէջ երեք Երոպոլիս կար. որոց մին կը

ամուր քաղաք մ'էր հաստ եւ անմատչելի պարիսպներով շրջապատուած. թշնամիք կու գան կը պաշարեն զայն. քաղաքացիք քաջութեամբ կը դիմադրեն եւ երկար ժամանակ ի դերեւ կը հանեն պաշարողներու բոլոր ջանքերը, մանաւանդ որ քաղաքին պարիսպներն ալ իրենց շատ նպաստաւոր կը լինին: Երկար յոգնութիւններէ յետոյ, թշնամիները կը յաջողին վերջապէս պարիսպը տեղէ մը ճեղքել եւ այն տեղէն քաղաքին ներսը խուժել: Խրամատէն առաջին անգամ քաղաք մտնողը Արար մը կը լինի եւ ատոր համար քաղաքին անունը կը դնեն Ար-բ-ի-է-ր¹, այսինքն արարածուտ²:

Թէ այս առասպելական աւանդութիւնը որչափ ստոյգ է, այդ մեզ համար փոյթ չէ. միայն ինչ որ աներկբայելի է այն է թէ Ար-բ-ի-է-ր-ի-է-ր այսօրեան աւերակ վիճակը մեզ կը ներկայացնէ հին, հարուստ եւ գեղեցիկ շէնքերով ճոխ քաղաք մը, որ շրջապատուած էր հաստաբնետ պարիսպներով³:

Գանուէր Փոքր-Հոյքի մէջ՝ այսօրուան Արարկիբի եւ
 «Փէլդ--Ար-ի-է-ր» աւերակ վանքին մշտեղերը:

1 Արարկիբ բաղկացած լինելու է «արեն» ըստ աւանդութեան, թէք. **بُـرْ** արար. եւ **كـيـر**, **كـيـر** մտնել բայէն, եւ իրոք Արարկիբի թէք. են ուղղագրութիւնն է **عـرـيـكـيـر**.

2 Ոմանք ալ կ'ըսեն թէ երբ թշնամիները յաջողեցան պարսպին մէկ կողմը ճեղքել, խրամատին ճիշտ քովք սեւ զինուոր մը (սեւ մարդոց արար կ'ըսեն Արարկիբցիք) կը գանուի եղեր. հրամանատարը բարձրաձայն կ'ըսէ անոր. «Ար-բ-ի-է-ր . . .» (Ար-բ-ի-է-ր . . .) ուստի եւ Ար-բ-ի-է-ր:

3 Մինչեւ այսօր կարելի է նշմարել այդ պարիսպ-

Թէ ճիշտ որ թուականին հին քաղաքն
երեսէ ձգուելով նախապատուութիւն տրուե-
ցաւ նորին, այդ մեզ յայտնի չէ, բայց զանա-
զան երեւոյթներ եւ մանաւանդ ականդութիւն-
ներ մեզ կը թոյլատրեն ենթադրելու թէ
այժմ Արաբկիր կոչուած քաղաքը՝ մէկ դարէ
աւելի գոյութիւն չունի: Ասկէ դեռ 30—35
տարի առաջ Արաբկիր պարզ *Գրեմ-Բիւն*
մ'էր, ոչ որովհետեւ տեղւոյն ժողովուրդը քիչ
էր թուով, այլ անոր համար որ կառավարու-
թիւնը կարող չէր հիմք դնել այնտեղ ուր
կ'իշխէին տեղացի իշխաններ...:

✱

Արաբկիր այսօր կարեւոր դիրք մը ստացեր
եւ առաջին կարգի *Գրեմ-Բիւն* մ'եղած է՝
չնորհիւ իւր առեւտրական շարժման եւ բազ-
մամարդութեան: Տեղւոյն գլխաւոր արհեստ-
ներէն է մանիսագործութիւնը, որով կը զբա-
ղին առնուազն հարիւրին յիսունը՝ եթէ ոչ
աւելին. յետոյ կու գան շերամարուծութիւնը,
երկաթագործութիւնը, ղինագործութիւնը, կոշ-
կակարութիւնը, բրուտութիւնը, գերձակու-
թիւնը, ներկարարութիւնը, ատաղձագործու-
թիւնը, դարբնութիւնը, նպարավաճառութիւնը,
պարզ վաճառականութիւնը (հագուստ կա-

ներուն մի մասը. իսկ եթէ Անդի քաղաքը պեղուհներ
լինին, շատ հետաքրքրական հնութիւններ դուրս պիտի
գան հողի ծոցէն. երկրի երեսը գտնուող աւերակներն ալ
հնախուզական ընդարձակ նիւթեր կը պարունակեն:

պուստի նախնական նիւթեր վաճառողներ), սեղանաւորութիւնը, եւն: Բոլոր այս արհեստները Հայերու ձեռքն են. միայն մնացործութիւն եւ մրգավաճառութիւն ընողներու մեծամասնութիւնը Թուրքեր են: Արեւելքի քաղաքներու յիմար սովորութեան մը համեմատ, Արաբկիրի շուկաներն ալ բաժնուած են քաղաքի միւս մասէն եւ կը գտնուին քաղաքին գրեթէ կենդրոնը: Երկու շուկայ ունի Արաբկիր, մին՝ Մէճ Շ--ի-յ (վենժ չափշու) եւ միւսը՝ Փոչ Շ--ի-յ (Պղտիյ չափշու). մէկը միւսէն մօտ 20 վայրկեան հեռաւորութեամբ (գրեթէ մի քիլոմէտր): Շուկաներուն մէջ կը գտնուին բոլոր խանութները, կրպակները, խաները, բաղնիքները, մեծ շուկային մէջ կը գտնուին նաեւ քաղաքային տունը (Հէ-ի-ճ-ի-ճ), ցորենավաճառութեան հրապարակը (Պո-չ-թ-ի-ճ Վէ-թ-ի-ճ), փայտավաճառութեան հրապարակը (Օր-ն Վէ-թ-ի-ճ), վերջապէս մէկ խօսքով՝ երկու շուկաներն Արաբկիրի կենդանութիւն տուող երկու թօքերն են: Աշնան ամիսներուն մէջ տասնեակ հազարներով ոչխար, այծ, գառն, ուլ քաղաք կը բերուին, եւ այդ ժամանակամիջոցներուն կը սկսի արտաքոյ կարգի մնավաճառական շարժում մը, ձմեռնային պաշար պատրաստելու համար: Անցողակի կերպով յիշենք թէ Արաբկիրցիք տարօրինակ եւ բոլորովին դատապարտելի սովորութեամբ մը կովի, եղան, խոզի միս բնաւ չեն ուտեր. ուտողներուն վրայ ալ խորթ աչքով կը նային:

groseille), ԳԼՕԷ (եղակ) եւն. բոլոր այս պտուղ-ներուն զանազան տեսակները կան Արաբկիրի պարտէզներուն մէջ:

*

Անցնիկք այժմ քաղաքին: Արաբկիր՝ ԱԿ-նէն (Յ-Է) չորս ժամով, Խարբերդէն կամ Քարբերդէն (Խ-բ-Է-Է)՝ երկու օրով, Մալաթիայէն՝ երեք օրով, Բալուէն՝ երկու օրով, Տիարպէքիրէն՝ չորս օրով հեռի է: Բնականաբար այս հեռաւորութիւնները կառավանի պարզ գնացքի հաշուով են: Քաղաքը թէպէտ՝ ինչպէս վերը յիշելու առիթ ունեցանք՝ երեսուն — 35 հազար բնակիչ ունի, բայց 100.000 բնակչօք քաղաքի մը երեւոյթը ունի. եւ ասոր գլխաւոր եւ կարելի է ըսել միակ պատճառն այն է՝ որ բոլոր տուները շինուած են պարտէզներու մէջ. շատ քիչ տուներ կան Արաբկիրի մէջ որոնք իրենց կողքին, առջեւ կամ ետեւը չունենան մի պարտէզ, երբեմն շատ մեծ եւ ընդարձակ:

Քաղաքը կը գտնուի ձորի մը մէջ, ուստի զառիվարներ (Գ-Է-Է-Է) եւ զառիվերներ (Գ-Է-Է-Է) շատ ունի, թէպէտ ուղիղ եւ երկար ճանապարհներ ալ շատ կան. ունի վեց գլխաւոր թաղեր՝ ՍԷԷ-Է-Է-Է կամ Շ-Է-Է-Է՝ արեւելիան կողմը. Քէլիչիքի թաղ՝ հիւսիսային-արեւելք. Ս-Է-Է-Է (Ս. Գէորգ) թաղը՝ հիւսիսային-արեւմուտք. Ս-Է-Է-Է (Ս. Կան) թաղ՝ հարաւային-արեւմուտք. Չ-Է-Է-Է (Մեծ Շուկային) թաղը՝ կենդրոն եւ հարաւային-արեւմուտք. Ժ-

Եւ (մայր եկեղեցւոյն) կամ Պշտի 2-րդ-ին
 թաղը որ քաղաքին կենդրոնը կը գտնուի: Այս
 թաղերն ունին իրենց զանազան ստորաբաժան-
 մունքները, որոնք իրենց յորջորջումը ստացած
 են տեղւոյն մեծատան ազգանունէն: Փոքրիկ եւ
 վայրենի գետ մը քաղաքը երկու մասի կը
 բաժնէ, հինգ-վեց քարաշէն եւ գեղեցիկ կա-
 մուրջներ եւ մի քանի փայտէ կամուրջներ քա-
 ղաքին երկու մասերը հաղորդութեան մէջ կը
 դնեն. շատ անգամ այս գետակը կը յորդի
 (մանաւանդ աշնան եւ գարնան ամիսներուն մէջ)
 եւ մինչեւ 3—4 մէտր բարձրութեամբ եւ
 քսան-երեսուն մէտր լայնութեամբ ջուր (պղտոր
 եւ կարմրագոյն) կը հոսի անկէ, սարսափելի
 արագութեամբ եւ ահռելի որոտումներով: Այս
 «էլ» մեծ ու փոքր քարեր, երբեմն մի քանի
 խորանարդ մէտր մեծութեամբ ապառաժներ,
 դիմացը գտնուող կամուրջները (փայտէ կամ
 յարմարցուած), ջրաղացները (գետակն իւր
 ընթացքին մէջ՝ խաղաղութեան ժամանակ մի
 քանի աղօրիներ կը դարձնէ), պարտէզներու
 պատերն եւ ծառերը կը քշէ կը տանի. երբեմն՝
 դժբախտաբար՝ մարդկային զոհեր ալ կը պա-
 տահին: Բարեբախտաբար ջրի այս չափազանց
 աճումը, որ Արաբկիրոց համար ճշմարիտ պա-
 տուհաս մ'է, շատ յաճախ չի պատահիր:

Այս գետակէն զատ որ Արաբկիրի գլխաւ-
 օրն է եւ որ կ'երթայ Անի 2-րդ¹ կամ Յանկոյն

1 Անի 2-րդ (— Անդիի գետը) կամ Յանկոյն 2-րդ
 երկու եղբայրներուն վրայ կը գտնուին Արաբկիրի սյգիներէն

2-յը (քաղաքէն գրեթէ 35 վայրկեան հեռի գետ մ'է, որ Կապուսի մէկ ճիւղը կը համարուի) կը թափի, կան նաեւ մեծ ու փոքր բայջ՝ նուազ կարեւոր՝ ջրի հոսանքներ, գլխաւոր գետակին երկու եզերքներուն վրայ երկու առուներ՝ պարտէզներն ու այգիները ջրելու եւ օրական պիտոյից համար, առուակներ, պաղպաղ աղբիւրներ, աղբերակներ, ակեր, որոնք քաղաքին ամէն կողմերէն կը հոսին եւ քաղաքացիները կ'երջանկացնեն գոնէ ջրի կողմէն:

Քաղաքէն մէկ ժամ հեռուորութեամբ՝ գէպի արեւմուտք՝ Փէլուս Եւոպէլ՝ (Փիլիպպոս

եւ պարտէզներէն շատերը, հոն կը գտնուին նաեւ քաղաքին բոլոր անոթները (ածուք), որոց մէջ առատօրէն կը բուսնին իշխիթը (գարունգ), սիւրճը (գարունգ), սիւրճիկը, Եւոպէլ եւն, եւ առ հասարակ ամէն տեսակի կանաչեղէնները, հոն կը գտնուին ընդարձակ եւ խորհրդաւոր անտառներ, անտառներու մէջ կամ բլրակներու կողքին եւ կամ ապառաժներու տակ՝ արծաթափայլ ջրերով՝ զոգասուն աղբիւրներ, ակեր, առուակներ . . . :

Եւոպէլ 2-յը Երաբկիբոյց համար թէ Station balnéaire (ծովեզերքի կամ ծովու բաղնիքի) եւ թէ Station thermale (ջերմուկի կամ հանքաջրի) տեղ կը ծառայէ: Եւոպէլ Ժամանակ ժողովրդեան ամէն գասակարգին պատկանող ամբողջ ընտանիքներ, քանի մը օրան պաշարն իրենց հետ առած կ'երթան Եւոպէլ 2-յը: Կիս ընկելու, լինուլու, լուկ բռնելու եւ կամ զուտ Եւոպէլ (ամբողջ մարմինը արեւն սաստիկ տաքցած աւաղին մէջ կը թաղեն, բացի գլխէն, եւ այդպէս կը մեան օրշափ որ կրնան համբերել, այս միջոցով կը դարմանեն շատ մը կրծքի, սրտի, փորի, սրունքներու, ոտքերու եւն հիւանդութիւններ), այնտեղ կը մեան մէկ, երկու, մինչեւ 8—10 օր եւ կը վերադառնան ողջ առողջ եւ լաւ գուարճացած:

Ի Փէլուս Եւոպէլ ու խառտեղին, անցեալ ժամանակներու մէջ հարուստ եւ փառաւոր վանք մ'է եղեր, որ կա-

Առաքեալ) ուխտատեղւոյն ճամբուն վրայ կը գտնուի յայտնին եւ նազելին Ուրբախի իւր համեղ ձկներով, որոնք իրենց տեսակին մէջ մէկ հատիկ են:

*

Արաբկիրի Հայերը ունին երեք թաղային եկեղեցի եւ մէկ մայր եկեղեցի՝ Աստուածածնի անունով, որ քաղաքին ճիշտ կենդրոնը, գետակին ձախ եզերքին վրայ կը գտնուի. կայ նաեւ Ս. Գեորգայ (Ս․՝՝՝ Գէորգ) անունով փոքրիկ մատուռ մը՝ քաղաքին արեւմտեան ծայրը, բլրակի մը վրայ: Իւրաքանչիւր թաղային եկեղեցի իւր կիցը ունի թաղային դպրոց մը. իսկ մայր եկեղեցւոյն կողքին կը գտնուի «Ուրբախ», որ ժամանակաւ, իւր ծաղկեալ դրութեամբ, տեսակ մը վարժապետանոց կարող էր համարուիլ ոչ միայն Արաբկիրի ամբողջ գաւառին համար, այլ նաեւ շրջակայքը գտնուող մեծ ու փոքր քաղաքներու համար ալ: Ուսումնարանէն մօտ հարիւր մէտր հեռաւորութեամբ կը գտնուի Մ․՝՝՝-Վ․՝՝՝-Գ․՝՝՝ (Մար Վարժատուն) ընդարձակ շէնքը, որու մէջ եր-

աւցուած կը կարծուի, ի յիշատակ Փիլիպպոս առաքելոյն այնտեղեքում գլխատման: Ծերերը կը պատմեն թէ (այդ ձերերն ալ իրենց ժամանակի ձերերէն լսած են) վանքն արջառներով, հողերով եւ միաբաններով շատ հարուստ է եղեր. այսօր չենքի հետք իսկ չէ Պացած, վանքը հաւասար է գետին, միայն աստ անդ գտնուած տաշուած քարեր եւ երկրաշափական ձեւերով խոռոչներ, փոսեր մատնացոյց կ'ընեն փառաւոր անցեալ մը՝ այդ աննշան աւերակներուն մէջէն: Եթէ որ մը պեղուիներ տեղի ունենան, անշուշտ շատ հետաքրքրական բաներ դուրս պիտի գան հողի ծոցէն:

բեմն մինչև 500 աշակերտներ եղած են: Այս եկեղեցապատկան վարժարաններէն զատ կան նաև ուրիշ թաղային դպրոցներ, ինչպէս՝ Ս. Նշան թաղինը, Եկաւէնց թաղինը, Փոքր շուկայինը, Տէրպէտէրէնց (Տ^օ-^րդ^օ-^ր-^օ-^րդէնց) թաղինը, եւն. կան նաև մասնաւոր վարժարաններ, զորս բացած են քիչ շատ զարգացած անհատներ:

Հայ կաթողիկեայք՝ թուով մօտ 100—120 հոգի, ունին քարաշէն փոքրիկ, բայց սիրուն եկեղեցի մը՝ առաջնորդարանով, առաջնորդարանին գեանայարկը յատկացուած է վարժարանի: Գերապ. Յովհաննէսեան եպիսկոպոսի առաջնորդութեան վերջերն կաթողիկեայց վարժարանը շատ ծաղկեցաւ եւ ունեցաւ մինչև 200 աշակերտ, որոց բնականաբար մեծամասնութիւնը ոչ-կաթողիկեայք էին:

Ղերջապէս հայ բողոքականները, թուով՝ գրեթէ կաթողիկեայց չափ, երկու աղանդի բաժնուած, ունին երկու ժողովատեղի ուստի եւ մի կրկնակ կրթարան:

Գալով թուրքերուն՝ ունին միայն մէկ հատ նախակրթարան, որ պաշտօնական տան (Հ^է-^րդ^էի) կողքին կը գտնուի, մօտ 100—150 աշակերտներով. կան նաև մէկ երկու նախակրթարանի նման բաներ ալ, որոնք դպրոցի անուն կրելու իրաւունքը եւ յաւակնութիւնը չեն կրնար ունենալ եւ ոչ մէկ տեսակէտով: Արարկիրի մահմետականներու մեծամասնութիւնը հայերէն կը խօսի (առանց

չափազանցութենէ վախնալու 100/75ը) եւ այնտեղ բնաւ զարմանալի չէ հայ դպրոցներու մէջ մահամետական երեսխաներ կամ պատանիներ տեսնել:

Ասկէ դեռ 15 տարի առաջ, մահամետականներն ունէին միայն մէկ մզկիթ՝ մինարէով, մեծ շուկային կենդրոնը՝ Գրեկ-Վահան-Կոնստանտնուպոլիս կից. այդ թուականներին Բեյլիկէ (քաջիշլաբ) թաղին մէջ շինուեցան նաեւ ուրիշ երկու նոր մզկիթներ նոյնպէս մինարէով, իրարմէ 2—300 մետր հեռաւորութեամբ. սակայն այս երկու շինութիւններն իրենց վերջնապէն ի վեր պարապ եւ երեսի վրայ ձգուած են առ ի չգոյէ այցելուներու:

*

Արարկիրի մէջ բառիս բուն նշանակութեամբ շէնք չկայ: Իրրեւ հետաքրքրական շինութիւն կարելի է յիշել, բաց ի մի քանի անհատական պալատներէ, երկու կրկին գմբէթաւոր բաղնիքները, Վաթոզիկեայց եկեղեցին, Հայոց Առաջնորդարանը, մահամետականաց վերոյիշեալ երեք մզկիթները (որոց շէնքերու կարգ մտնելու միակ պատճառն է երկինք բարձրացող մինարէն), երկու խան, եւ ահա ամէնն: Հայոց չորս եկեղեցիները բնաւ կարելի չէ շէնք անուանել, վասն զի անոնք չեն տարբերիր՝ արտաքին տեսքով՝ ուրիշ հասարակ տուններէ, թէպէտ մայր եկեղեցւոյն ներսի դին բաւական շքեղ է իւր սիւներով, հոն միայն գեղարուեստական շոշորթ մը կը տեսնուի: Միւս

եկեղեցիները՝ աննշան բաներ են եւ աւելի կը նմանին ընդարձակ դահլիճներու քան թէ տաճարներու. ճարտարապետական արհեստը բուրովին բացակայ է անոնց մէջէն:

Այս տողերուս մէջ համառօտ կերպով՝ ընդհանուր տեսութիւն մը ըրած եղանք Արարկիր քաղաքին վրայ¹, որ շատ շատերուն անծանօթ է մինչեւ օրս:

Բ.

Նմոյշ Արարկիրի բարբառին:

Խօճ- Հ-րէրէին Ա-ի:

Հասրէտտին խօճան յիր տան մէջը աղօթած վախտը¹ ըսաց Ասծու. «Ըման Ասված պապա,² ի՛չ կըլի կու, յընծի հարիր լիրա զրկա³. շատ պէ՛քք ունիմ փարայի: Ըմա³ թա՛մամ⁴ հարիր լիրա յըլելու ա⁵, ա՛կա՛ր⁵ մէկ հատ մը պակաս՝ տօխսանը⁶ ինը հատ յըլին նա՛ չ՛օթ՛-թեր, հա՛մտա՛: չեմ առնար:»

Խօճան եահուտի⁸ դրացին մը կ'ունենայ կու վօր ան տախքա՛ին⁹ տէնէրը¹⁰ նստէր ա՛ էղէր. խօճային ձանը լսածին կիպի¹¹ կ'եթա յընկաճ դնա՛ կու ջու յեք՛քէն յինքյիրենը կրսա՛ կու.

1 Աերջին տարիներուս մէջ պատահած դէպքերէն ի վեր Արարկիրի մասին մեր պատմածները բաւական փոփոխուած են. այսու հանդերձ մեր առաջ բերածին էական մասերն նոյն են:

¹ Ժամանակ. — ² հայրիկ. — ³ բայց. — ⁴ ամբողջ, ճիշտ. — ⁵ եթէ. — ⁶ իննսուն. — ⁷ եւ թէ. — ⁸ հրեայ. — ⁹ վայրկեան. — ¹⁰ տանիք. — ¹¹ պէս. — ¹² արդեօք. —

“Յաճաճօր¹² տօխսանը ինը օսկի տեսնա
նա՞ իրաւցնէ շառնա տի, խօճան. էս լիրաները
խա¹³ պաճայէն¹⁴ վար ձգիմ տա՞ տեսնամ ի՞շ
տ'էնա՞ տի իտա¹⁵ խօճան:”

Յեք'քէն տօխսանը ինը լիրա քէսայի¹⁶ մը
մէջը դնա՞ կու ջու կուգայ կու պաճայէն “փրթ”
վար նետա՞ կու. յինք ալ հոնիկ պաքլամիշ¹⁷
կ'էնա՞ կու քի տեսնա տէ խօճան իշ տ'էնա՞ տի:

Խօճան հըմըն¹⁸ օճախը վազա՞ կու ջու
տեսնա կուքի գունտ պօխճա¹⁹ մը յընկեր ա՞
ֆոն. թէզ մը կ'առնա կու, տէշակի²⁰ մը վրան
նստի կու, քէսա՞ն բանա կու վօր՝ ի՞շ տեսնա,
օսկի: Յեք'քէն պաշլայա²¹ կու մէկիկ մէկիկ
հարմել. տեսնա կու քի տօխսանը ինը հատ էն
օսկիները. մէյ մ'ալ կու հարմէ, երկուք կու
հարմէ՝ պալքի²² եաղմիշ²³ էղա ըսելօք, յամէն
հեղ հըսապ²⁴ էնէլուննորէն տօխսանը ինը հատ
գտնա կու. յեք'քէն կ'ըսա՞ կու Ասծու. “գու-
նօր տօխսանը ինը լիրաները զրկեցիր յընծի
հալպաթ²⁵ մէկալ մէկ հատ-նալ զրկես կու:”
Յեք'քէն ան օսկիները տանի կու ջու գողտուկ
տեղ մը պահա՞ կու:

Եահուտին տեսնա կու քի խօճան լիրա-
ները առաւ ջու ձան ձուն չի հաներ նը: Ա'եթա
խօճայէն փարաները յէտ կուզա՞ կու: Խօճան
ինքա՞ր²⁶ կ'էնա՞ կու ջու կըսա՞ կու. “ի՞նչ օսկի
եահուտի փախցընես նը.”

¹² այս. — ¹⁴ ծխնելչղ. — ¹⁵ այդ. — ¹⁶ քսակ. — ¹⁷ սպասել.
— ¹⁸ անմիջապէս. — ¹⁹ ծրար. — ²⁰ պաստառ. — ²¹ կը սկսի.
— ²² գուցէ. — ²³ սխալեցայ. — ²⁴ հաշի. — ²⁵ անտարակոյս.

— Իս էի ան օսկինները պաճայէն վար
նիտօղը տեսնալու հըմար տա՞ առնաս տի.
Թէզ²⁷ ինա²⁸ օսկինները յէտ տուր:

— Ասված իմ ուղածս յընծի զըկեց.
գնա՛ կորսը վեց!

— Մէնէր, մըլիւր, տուր խօճա, եա չինէ²⁹
քէֆիտ³⁰ հա՛, ա՛կա՛ր չիտսա նա՛ խապա՛ր³¹ էս
տա՞ ի՛շ տ'էնիմ տի, տ'եթամ զատուն³² գան-
գատ տի տամտի!

— Ի՛շ կըլիս նը, ալ պաշլայեցիր³³ գըլօսս
ցաւցնես նը. գնա՛ քէֆտ ի՛շ կուզա՛ նա՛ ան էրա՛:

Եա հուտին ումուտը³⁴ կըյյա կու. շատ
ղզմիշ³⁵ կ'ըլի կու ջու կ'եթա զատուն գանգատ
կ'էնա՛ կու:

Ղատին մարդ զըկա՛ կու խօճային վօր յիր
յա՛նջէվը գա. եա հուտին ալ գուգայ կու խօ-
ճան տանելու հըմար: Անվախտը³⁶ խօճան կըսա՛
կու եա հուտուն:

— Իս ֆըխարա³⁷ մարդ էմ, լաթէրս
հին էն, զատուն յա՛նջէվը իսա լաթէրօքս չեմ
կայնար էլալ, յառնամուս³⁸ ունիմ, հէշ կըլի՛:
Քու սամուր³⁹ քիրքդ բեր տա՛ հաքնիմ անպէս
էթամ:

Եա հուտին տեսնա կու քի պախշա⁴⁰
չէշիտ⁴¹ չըլի տի կ'եթա յիր քիրքը բերա՛ կու

— ²⁷ ուրանալ. — ²⁸ շուտ. — ²⁹ այն. — ³⁰ ապա թէ ոչ. —
³¹ կամքիդ. — ³² դիտես. — ³³ գատուտը. — ³⁴ սկսիլ. —
³⁵ յոյսը. — ³⁶ բարկանալ. — ³⁷ այն ժամանակ. — ³⁸ ազքատ.
— ³⁹ համբաւ եւ պատիւ. — ⁴⁰ Սամոյր մուշտակ. — ⁴¹ ուրիշ.

յու կրսա՞ կու. «ըՆընաքա⁴² քիրքը, թէզ էրա՞, հագիր՝ էթանք:»

Խօճան քիրքը հաքնելէն յեք՛քը կ'ըսա՞ կու եահուտուն. «էս խօճաէմ, սամուր քիրք ալ հաքիր էմ, հէչ յըլելիք բա՞ն ա՞ քի մինչուք զատուն տունը եայ'եան⁴³ էթամ. ի՛շ կ'ըլի էչտ բեր տա՞ հեզնամ անպէս էթամ:

Եահուտին կ'եթա էշ-նալ բերա՞ կու յու «իշտա՞քա⁴⁴ էչը, կ'ըսա՞ կու, հայտէ էթանք:»

Ա՞նճա՞մը⁴⁵ խօճան էչը հեզնա կու յու երկուքը մէյտեղ ճանփայ կ'ը՛յնին կու. խօճան յա՞նջէվէն՝ թափուռօք,⁴⁶ չալում⁴⁷ ծախելօք, եահուտին ալ յա՞քսա՞էն⁴⁸ քէլա՞յի⁴⁹ պէս եայ'եան՝ կեթան հասնին կու զատուն յա՞նջէվը:

Ղատին խօճային քէ՛ֆը հալը⁵⁰ հարցնելէն յեք՛քը կ'ըսա՞ կու. «խօճա ա՞ֆա՞նտի, դուն իսա եահուտուն փարան առէր էս ինքա՞ր՞ կ'էնէսնը. իտա գըզի լայրիս⁵¹ բան ա՞. հայտէ⁵² մասլահաթը⁵³ նախլ⁵⁴ էրա՞ տեսնամ:»

— «ա՞ֆա՞նտմ, կ'ըսա՞ կու խօճան, իսա եահուտին յիր խելքը կորսնցուցեր ա՞, էս յիրեն պաթք⁵⁵ մաթք չունիմ. ա՞կա՞ր անոր ըսազներուն հայիս նա՞, հըմա կ'ելա կ'ըսա՞ կու քի իսա վըրիս քիրքս ալ յիր-ն՞ա՞:»

— Յըպա⁵⁶ յո՞ւմ-ն՞ա՞, հա՞լպաթ տա՞ իմըն-սա՞! ըսաց եահուտին:

— ⁴¹ կերպ. — ⁴² ահաւասիկ. — ⁴³ հետիտան. — ⁴⁴ ահաւասիկ. — ⁴⁵ վերջապէս. — ⁴⁶ շքեղութեամբ. — ⁴⁷ պարծանքով. — ⁴⁸ ետեւէն. — ⁴⁹ դերուղ նման. — ⁵⁰ սրպիտութիւնը. — ⁵¹ սրժանի. — ⁵² օն. — ⁵³ պատմութիւնը. դէպքը. —

— Տեսար, զատի անփանտի, ան տաճա ⁵⁷
 քիշ մ'ալ կենայ նա, պալքի կ'ըսա՞ կու քի իմ
 չեծած էշը-սալ յիր-ն'ա՞:

— Հանլպանթ տա՞ իմըն-ս'ա, կինա ⁵⁸ ըսաց
 եահուտին, զատի անփանտի, էս յիրեն տըվի
 վօր չեղնա տա՞ հոսիկ ⁵⁹ գայ:

Անվախտը խօճան ըսաց զատուն. «Ղատի
 անփանտի, էս գըզի չ'ըսի քի, իսա մարդը
 իսենթցեր ա՞, դուն ալ տեսնաս նը քի պակաս
 ա՞, քանի եօր իմ պիթին ⁶⁰ բաներս յիր -ն'ա՞
 կըսա՞ նը:»

Ղատին խօճային թէր կ'ելայ ջու անոր
 հախ ⁶¹ կուտա. եահուտուն ալ աղէկ մը հեր-
 սոտի ⁶² կու ջու դուրս կ'էնա՞ կու:

Խօճան համ ⁶³ տօխսանը ինը լիրաները
 պահա՞ կու, համ տա՞ քիրքի մը ջու իշու մը
 տէր կ'ըլի կու:

Գ.

Առածներ, աստիճիւններ, անէձքներ, աւելորդապաշ-
 տուճիւններ, եւն:

Անօթին քար-ն'ալ կուտա՞ կու.

Այրած սրտին քաք միսիթարանք.

Աշքտ էլար տա՞ անունտ չէլար.

Ասեղ ձգելու տեղ չիկա՞.

յամէն քարի տակէն կ'ելա՞.

Բանը բանէն անցեր ա՞.

⁵⁴ պատմել. — ⁵⁵ պարտք-մարտք. — ⁵⁶ հապա. — ⁵⁷ գեռ. —

⁵⁸ նորէն. — ⁵⁹ այս տեղ. — ⁶⁰ բռլոր. — ⁶¹ իրաւունք. —

⁶² բարկանալ, կշտամբել. — ⁶³ թէ:

Բանս բուրդ ան՝

Գողը գողէն գողցաւ Ասված տեսաւ
զարմցաւ.

Գող՝ սիրտը գող.

Էշ-ն՝ ան՝ հեծեր՝ էշ բնտանը.

Էշը չի կերած խօտ-ն՝ ուտան՝ նա՞ գլօխը
ցաւի կու.

Էշը իշուն քովը կապես նա՞ եա յառուցը՝
կառնա՞ եա փառուցը՝.

Էշ-ն՝ ի՞շ գիտան՝ տան՝ նուշ-ն՝ ի՞նչ ան՝.

Էրէս տուր՝ աստառ ալ կուզան՝ կու.

Էս քուն՝ բաղգս այ՛ թուն.

Ի՞շ ցանես՝ ան կու քաղես.

Լանգ ըսես նա՞ լանգլանգու հասկնա կու.

Խենթ-ն՝ ըսաց՝ խելօք-ն՝ հաւտաց.

Խենթը խրատ-ն՝ ի՞նչ * էնան՝, սեվը սա-
պօն-ն՝ ի՞նչ էնան՝.

Խենթին հմար՝ յամէն օր տօն ան՝.

Խլօտին՝ ցուրտը մահանա.

Խօսքը վենձին՝ չուրը պղտիկին.

Կատվին ըսին քի քաքա գեղ ան՝, գնաց
թաղեց.

Կատուն յիրեն հմար գէշ յերած չի
տեսնար.

Համ՝ լանք՝ համ՝ էթանք.

Ճերմակ հարսին տուշմանները՝ շատ կըլին.

Մէկ չ՝ ան՝ հաղար շար կու խափան ան՝.

1 եա յառուցը — եա փառուցը — եա վ(յ)առուցը
— եա վարուցը — վարք. — 2 փառուցը — բարուցը — բարք.
— 3 հմար — հըմար — համար: — 4 թ.ք. թշմաթ. — 5 թ.ք.



A 13468
73666

Յընկաճը ծակ անձ.
 Յընծի նեղ՝ գըղի տեղ.
 Շուն-ն՝ յիշես նա՞՝ աքին խաղցընա՞ կու.
 Ուլուլիկ սուլուլիկ՝ ել տա վարը վար էրա՞.
 Չեմ ուզեր՝ ճէպս⁵ ձգա՞.
 Չ'ան՝ չամիչ չ'ա՞.
 Չ'ա՞՝ բունա՞ կ'անչա՞.
 Չ'ա՞ չամիճին⁶ յօռուն փչա՞.
 Պատերը յընկաճ ունին.
 Զուրը չի հասած եմանին⁷ հանա՞ նը.
 Զուրը տանիլ՝ ծառաւ բերել.
 Զուր տեսնա նա՞ ձուկ կըլի՝ ծակ տեսնա
 նա՞ մուկ կըլի.

Սոխ չեմ կիրեր քի, սիրտս այրի.

Սոխին անուշը չըլի.

Վենձ էշը ախոռը մոռցանք.

Քիչ բանցի՞ր՝ թէզ⁸ դարձի՞ր.

Քուրտը չըսեր քի թանս⁹ թթու անձ.

Քաքտ խորուն մի թաղեր.

Յամպուկըցի¹⁰ կըցի կըցի

Դռան-ն՝ յաքսան¹¹ կամթեցի

Արին-ն՝ ելաւ չի վացի:

Ըստամպուլ՝ վաստակը պուլ¹²

Խարբեթ՝ բամպակը պուլ

Յարաբկեր՝ բեր ու կեր!

դրպան. — 6 թք. այծ. — 7 անկրունկ կօշիկ. — 8 թք. շուտ.
 — 9 կարագէն զրկուած կաթ. չճուկ. — 10 Յամպուկան — Ամ-
 պուկան՝ Արարկիբի հիւսիսային կողմը, տասը վայրկեան հե-

* * Աշքտ քորնա՛. — Ղաֆիլ Ղատայի¹³
 աաս¹⁴ գա՛ս. — տուն¹⁵ ալօի՛. — շին¹⁵
 տակը մնա՛. — գետինը մտնա՛. — վար ասնի՛.
 — եօխ¹⁶ յըլի՛. — վայր տամ՛. — գրո՛ղ. —
 գրողը տանի՛. — էրկու աշքը քորնա. — օր
 արեւ չի տեսնա՛. — Ասված հոգին առնա՛. —
 գետին-ն¹⁷ ասնի՛. — սատկի՛. — շիվանը¹⁷
 նստի՛մ. — խէրը¹⁸ չի տեսնա՛ս. — դանէ դուռ
 մուրա՛ս. — կէնճուժանտ¹⁹ խէրը չի տեսնա՛ս.
 — ժամուն դուռը մուրա՛ս. — չորնա՛ս. —
 ձա՛ռքտ չորնա՛. — օտքտ կոյլի՛. — հողին
 տամ՛. — վայ գլխիտ. — գիտնին եօթը Ղաթը²⁰
 ասնի՛ս. — հողը դնի՛մ. — Աստուզմէն գտնա՛.
 — Ասված հախէն գայ. — աշքտ խաղայ! եւն:

* * Ղուրպանտ²¹ յըլիմ՛! — հոգուտ
 մա՛ռնիմ՛! — եսիրտ²² յըլիմ՛! — պօյըտ²³
 սիրիմ՛! — աշքտ սիրիմ՛! — օտքտ պագնիմ՛!
 — հոգիս գըզի Ղուրպան՛! — հոգուտ մատաղ՛!
 — աչիցս լոսը! եւն եւն:

* * Իշու ձաք! — շան ձաք! — իշու
 գլօխ! — շանը սրմալու²⁴ սիան²⁵! — շուն
 շան²⁶ օրթի! — էշ! — սիա! — կով! —
 հօրթ! եւն եւն:

աւսորու թեամբ խոշորկեկ գեղ մ¹է: — 11 ետեւը. — 12 ա-
 աատ. — 13 փորձանք. — 14 պատահիլ. — 15 վիզ. — 16 ո՛շ.
 շ. . . — 17 լայ. — 18 օգուտ. — 19 երիտասարդութիւն. —
 20 ծալք. — 21 զոհ. — 22 գերի. — 23 հասակ. — 24 սակեղօծ.
 — 25 փորք ձագ. — 26 թք. մանուկ. — 27 թք. երեխայ. —

Պարապ օրանը օրին նա՞ չաղան²⁶ մա՞ն-
նի կու.

Կըյած ըղունկներդ կրակը նետես նա՞
խենթնաս կու.

Չօճօխներուն²⁷ ըղունկը չեն կըյեր օր
գող չըլին.

Սոխին փուրը²⁸ կրակը նետես նա՞ դժոխ
կեթաս.

Եկա՞ր յիրիկունը շուն օնս նա՞ մահ կու
պատահի.

Յերկինքի ասղնտիկը²⁹ վէր դի օր էթա
հնիկ մէկը մա՞ռած կըլի.

Չա՞քտ կ'ա՞ռա նա՞ փարայի նչան ա՞.

Օտքիտ տապանը³⁰ կա՞ռա նա՞ ճամբորդ
տ'ըլիս տի.

Սաղ³¹ աչքտ խաղա նա՞ բարի ա՞, սօլը³²
խաղա՝ չար.

Հացին վրան չեն կոխեր, մեղք ունի.

Եղը թափողը անդիյաշխարքը պրղունք-
ներօքը ժողվա՞ տի.

Փոքտաս նա՞ գիտցիր օր քու վրատ կա՞-
լա՞ճէն³³ նը.

Ունքտ խաղա նա՞ ճամբորդ տի գայ տի.
Եւն Եւն:

26 տերեւ. — 29 Ալացող աստղը (étoile filante). — 30 ներ-
բան. — 31 աջ. — 32 ձախ. — 33 խօտիլ:

Պ.

Բառագիտութիւն:*

—

Ազուխ = ազօխ. — 1. խակ խաղող.
2. նմանութեամբ խակ պտուղ ալ կը նշանակէ:
ալ . . . երեւակայական էակ, որ մարդ-
կանց վնաս կարող է հասցնել, մանաւանդ նո-
րածին երեխաներուն:

ալիք = ալիւր:

ախփար = աղբար = եղբայր. 1.
Հայր. 2. եղբայր: Արաբկիրցիք առհասարակ
-ի-է-բ մառը կը գործածեն հայրը նշանակելու
համար. իսկ եղբօր համար կը գործածեն՝ անոր
անունը եւ վրան կ'աւելցնեն դարձեալ ախ-
փար մառը:

ախիիք = աղբիր = աղբիւր:

ած էլալ — 1. հաւը երբ կը սկսի ածել
« ած ելաւ » կ'ըսեն. 2. երբ հաւը կը սկսի խօսիլ՝
նոյն ոճը կը գործածեն. 3. այլաբանօրէն՝ լռու-
թիւն պահողի մը յանկարծ խօսիլ սկսիլը:

* Ամեն ջանք եղած է՝ բառագիտական մասս
կատարեալ ընելու. այստեղ նշանակուած են այն բառերը,
որոնք մասնաւոր առում մը ունին եւ կամ բարբոսին
յատուկ են Արաբկիրի գաւառաբարբառին: Մեր ցանկէն
գուրս ձգուած են նախ այն բառերը որոնք նոյնն են արտա-
սանու թեամբ եւ նշանակու թեամբ՝ գրական լեզուին հետ եւ
երկրորդ փոխառեալ (մանաւանդ թուրքերէնէ) բառերը որոնք
հետաքրքրութենէ զուրկ են, ըստ մեզ, բառագիտութեան
համար, եւ որոց սակայն զիմած ենք գործիս Բ. Մասին՝
2-յն-իւն — — — — — Տեղիւն-իւն մէջ:

ածէն կյիլ = ածէն կտրիլ . . . վերինն հակառակը:

աղնծել = աղանծել. մտորի կամ մաղմաղ կրակի մէջ սինեռ (հատիկ) կամ եգիպտացորեն (հեղսրմացորեն), եւն խորովելու կամ եփելու գործողութիւնը:

աղրայ = ակոայ. 1. մարդոց ակոաները. 2. ժանիք. 3. այլաբանութեամբ՝ ռի:

ամուր, 1. պինդ. 2. բարձր՝ "հասարակ" . 3. ուժեղ, սաստիկ՝ "հասարակ" :

ան = այն, ցուցական երրորդ դէմք:

անէրծար = աներձագ = աներօջ ձագը (!), կնոջ եղբայրը:

անկուտ = ան+կուտ. 1. առանց կորիզի. 2. փող չունեցող. "անկուտ" = թութ՝ որ կտրիղ չունի:

անըծել = անիծել = անիծանել. 1. անէծք կարգալ՝ ասել մէկին. 2. նզովել, բանադրել մէկը:

անիծ, ոջլաձու կամ ոջիլի հակիթ:

անուխ = աննուխ = անանուխ, հոտաւէտ խոտ՝ թխագոյն (menthe). թ.ք. "անէ շիւշ" :

աշխիլ, աշխած, կերակուրի աւրուիլը եւ հոտիլը:

աշկապուկ = աշքկապուկ = աշք+կապուկ = աշք+կապ+ուք, մանկական խաղ՝ որ ամէնուն յայտնի է:

ապրցու = ապուր+ցու. 1. ապուր (փիլաւ) շինելու նիւթ. 2. աշնան պաշար ընդեղէններու:

ասլուր, փիլաւ կամ փիլաֆ. Արարկիրի
բարբառով արար = փիլաւի. խկ շէրէ (=
թ.բ. շորպա) = ապուրի:

առնալ = առնել = առնուլ:

աւ = այս. ցուցական՝ ամենամերձը մատ-
նանիշ ընող. Ա. դէմք:

ասղնտիլ = ասեղնտիլ = ասեղ +
նոտ + իլ. 1. Ցաւ մը յորում կարծես ասեղ-
ներու հաւաքածոյ մը միանուագ կը մտնեն մար-
մնոյն մէջ: 2. ասեղով ծակծկել:

ասղնտիք = աստղնիք = աստեղն + իք.
աստղ. յ. ք. ասղնտիք + ներ:

ատ = այտ = այդ. ցուցական՝ երկ-
րորդ դէմք, խօսողէն քիչ հեռու:

արարիչ բացուած ծալք ծալք խմոր՝
զոր տարանկիւն (losange) կը կտրեն եւ իւղի
մէջ կը տապակեն:

արդարէն = արդար + իւղ. կարագ իւղ:

արինթաթախ = արիւն-ա-թաթախ.
արեան մէջ թաթխուած, արիւնով պատած.
" արինթ-թ-ին-ին Էնէլ " = քանի մը տեղերէ վի-
րաւորել մէկը եւ արիւններ վաղցնել:

արինվայ = արիւն-վայ. արեան մէջ
լուացած, արիւնով պատած. " արինթ-թ-ին-ին-
վայ Էնէլ Էն: "

արմունկ = արմուկ = արմուկն:

յ

յաղիք = աղիք:

յառիք = առաստաղ, ձեղուն:

յառտու = առտու, առաւօտ. “յառ-
տու յէր--ին--ն, առտու իրիկուն:

յառտըվանց = առաւօտուն. “յառ-տը-
վանց ին--ն, առաւօտուն կանուխ:

յարտ = արտ, անդաստան:

յաւի = 1. ասի. 2. ձեռք. ձեռաց մէջի
կողմը. “յ-տի-տի, յ-տի-տի-տի:

յաւիշիլ = փշիլ = փշիլ, փշուշ
կրթիլ. “յ-տի-շի-շի-շի-շի-շի:

°

անլուծ կամ անլուծ = սալորի ընտանիքէն
դեղին կամ կարմիր պտուղ մը, մէջը խոշոր
կորիզով. “տի-լու-ծ, ի-յ-տի-լու-ծ:

անլիշ = ակիշ. կրակի համար փոքր
թիակ երկաթեայ:

անուր = սեխ. շատ քիչ անգամ սեխ
բառը կը գործածուի, այլ միշտ անուր:

անյիլ = այիլ = արիլ = այրիլ:

անրիլ = այրիլ. այս ձեւը վերածնու-
թեան հետեւանք է. գործածականը առաջինը
անյիլն է:

անթարի = էնթերի. տղամարդոց սո-
վորական զգեստը:

յ°

յանանի = թք. աճապա = արդեօք.
“յ-ան-ան իլուի:

յամին = յամ'մէն = ամմէն = ամէն.
“յ-ամ-ին իլուի-տի-տի-տի:

յամմու = ամու. 1. հօրեղբայր. 2. դրկից
բոլոր էրիկ մարդիկ. “յ-օ-է-ն-ց ր-ո-ն-ը ք-ո-ն-ի-ն.”
“յ-օ-է-ն-ց 1-ի-ը ք-ո-ն-ը 2-օ-ի-ն.”

յամմուլար = ամպար = ամբար. 1. հաց
դնելու մասնաւոր տախտակէ գզրոց (տօլապ).
2. ցորենի շտեմարան:

յամջէվ = առաջել, առաջքը:

յամջի = առաջի = առաջին:

յամջընէկ = առաջնէկ. առաջին երե-
խան:

յամի = ուտել՝ մանկական բառ. “յ-օ-ք
է-ր-օ-ն կեր:”

Բ.

Բալի = բալլի = բանլի = բանալի:

բաղարջ = առանց խմորի հաց:

բամալլուկ. տեսակ մը համեղ խոտ՝ 15
—20 սմ, երկայնութեամբ եւ 1/2 սմ. լայ-
նութեամբ:

բանմար = բանջար — բառս կը գործ-
ածուի միայն ճակնդեղի մէկ տեսակին համար,
որուն միայն կանաչ մասը կ'ուտեն:

բասլիլ = բացուիլ. 1. ծաղիկներու բա-
ցուիլը. 2. մարդկանց համար ձակութիւն ստա-
նալը. 3. սկսիլ. “ք-ո-ն-ը ք-ո-ն-ի-ն-ց-ն-”:

բարակցաւ = թղթախտ:

բարկ, փայլուն կրակ. “ք-ո-ն-ը ք-ո-ն-ի-ն-ց-ն-”
ք-ո-ն-ը ք-ո-ն-ի-ն-ց-ն-”:

բարկնալ, կրակին երթալով փայլիլը,
լաւ վառիլը:

բարկենտանք = բարեկենդան:

բզիկ բզիկ ընել, ամենափոքր մասերու
բաժնել, բզքտել:

բզտել = պատռել:

բնտռտել, փնտռելու ետեւէ լինել:

բշտել, մարմնոյն վրայ փոքրիկ բշտիկներ
ելլել:

բոթ = բոյթ. ձեռաց կամ ոտքի մատ:

բոթել = բոյթ + ել — մատով՝ բոյ-
թով բանի մը համը տեսնել. հարնել (մատով
ուտել):

բողող = բղուղ. հողէ աման՝ մէջը ըն-
դեղէն լեցնելու համար:

բոնկալ = բոյն + կալ. 1. հաւու բոյ-
նին մէջ դրուած ձու. 2. հաւուն տեղը:

բոսիկ, բոկոտն. 1. առանց ոտնամանի.
2. կոշտ մարդ:

բոխնճ = բռնջի պտուղ:

բուլվար = բուրուան, խնկածխիչ գործի

բուշտ = բշտիկ, փոքրիկ սրածայր վերք:

բուռ, ափ, ձեռաց մէջի քանակութիւնը
(ալուճ):

†.

Գազ, տեսակ մը կարծր եւ սրածայր խոտ,
զոր բաղնիքներու մէջ կը վառեն:

գաթայ = գաղայ, աղնիւ թանձր հաց
(պարսիմաթ):

գանկառ = կանկառ:

գանկատ = գանգատ:

զանկտիլ = գանգատել, 1. գանգատ
ընել՝ տալ. 2. դատ բանալ:

զերզշտալ, բերնէն ստամոքսի կաղ ար-
ձակել:

զերզշտուք, նախորդ բառին գործողու-
թիւնը:

զզվիլ, կռուիլ զերար քաշքշելով. նա-
խատական բառ է:

զզվտիլ, սաստիկ կռուիլ:

զըզի = քըզի = քեզի = քեզ:

զլօխ = գլուխ. 1. գլուխ. 2. գագաթ.

“ Գ-ն-դ Գլ-ի, Գ-ն-ը Գլ-ի-ը ”:

զլօխ ունննալ = սիրել. գաւառաբար-
բառիս մէջ երբ կ'ուզուի ըսել թէ մէկը ուրիշ
մը կը սիրէ, այսինքն խորին համակրութիւն մը
ունի դէպ ի այն՝ այս ասութիւնը կը գործածուի.
“ Ե- Գլ-ի Գլ-ի ”-ն է՝ “ Ես քեզ կը սիրեմ. իսկ
-ի-ի-ը բառը կը գործածուի միայն մտերմական
յարաբերութեան մէջ. “ Ե- Գլ-ի-ը Գլ-ի-ի-ը -ի-
-ի-ը ”, ըսել է թէ այս մարդը այն կնոջ հետ
մտերմական ապօրինի յարաբերութիւն ունի,
անոր սիրականն է:

զլտորել գլըրել՝ իր եւ մարդ. “ Գ-յ-ի-ը-ն-
-ը -ի-ը Գլ-ը-ի-ը ”:

զլտրել գլըրել՝ իր եւ մարդ. “ Գ-յ-ի-ը-ն-
-ը -ի-ը Գլ-ը-ի-ը ”:

զղթոր կամ զխթոր = noix de galle.

զմքուկ = Գ-Գ(եթ)-ն-ի = Գ-Գ + -ի-
բառուցք. յիրաւի եթէ ձեռաց մատները գոցուին
գմքեթաձեւ երեւոյթ մը կ'առնէ ձեռքը. “ Գ-Գ-ն-ի-
-ը ”:

հը շըբիւն, քիբուիւն քիբիւն քիբիւն քիբիւն քիբիւն, եւայլն, բռունցք... բռունցքով...:

գվրուկ սալվոր — սալորի մէկ տեսակը որ խիստ խոշոր է՝ մինչեւ բռունցքի մեծութեամբ եւ շատ համեղ:

գնտիլ = գունտ + Իլ. — գունտ՝ ուռեցք ձեւանալ մարմնոյ մէկ մասին վրայ, սաստիկ հարուածէ մը յետոյ. « +բէս+ հը քիբիւն շըբիւն, քիբիւն քիբիւն »:

գնտել = գունտ + ել — խմորի, ցեխի, կամ ո՛ր եւ է շաղուած նիւթի գնդաձեւ կերպարանք տալ: « խմորը քիբիւն, շըբիւն քիբիւն »:

գնտիկ — գլուխը խաղցնել՝ երբեքնել. մանկական բառ. « քիբիւն յիբիւն քիբիւն »:

գնտրել — գլորել. « քիբիւն քիբիւն (հացի գլանիկ) յընչէ քիբիւն »:

գնտրտել — իրարու վրայ՝ մի քանի անգամներ գլորել. « քիբիւն յիբիւն քիբիւն »:

գոռել — մահմետականաց գերեզման:

գոռելնոց = գոռել + նոց մահմետականաց գերեզմանատեղի՝ գերեզմանատուն:

գործել — կը գործածուի միայն մանուսա շինելու մեքենայով (հէր) աշխատելուն համար. « քիբիւն քիբիւն քիբիւն »:

գուռ — քարէ ընդունարան, որ աղբիւրներու առջեւը դրուած կը լինի վաղած ջուրը ընդունելու համար:

գրող կամ գրող — հոգի առնող՝ տանող երեւակոյական էակ, հին քիբիւն կամ քիբիւն (կրել)

անունէն մնացած, « քրօղը քռի! (անէծք). քրօղ
(բացադանութիւն). քրօղ քռի երբ »

զօթի — ծոյլ, անգործ, թափառիկ.

« քռի քրօղի քռի! քրօղի քրօղի քռի քռի քռի քռի »

զօտնիփաթ = զօտի + փաթ (= փոթ)

— զօտիին փաթաթութենքերուն կամ փաթերուն
մէջ (զուրշագ արասը). « քռի քռի քռի քռի »

քռի քռի. կայ նաեւ քռի քռի որ աւելի վաւեր-
բացօցիչ է բացատրութեանս:

Գ.

Դան — կողմ, մէկ կողմ. « Դան երբ, Դան
քռի, Դան քռի քռի » եւն:

դաշոն = դաշտին — երկաթէ՛ մէջը
կլայեկուած՝ ընդարձակ՝ կլոր աման, բարձր ե-
զերքներով. կը գործածեն լուացքի (լաթ, ցորեն
եւ ամէն նիւթ) համար:

դարվար — զառիվար. « Դարվար քռի
քռի քռի քռի քռի »:

դարվեր — զառիվեր. « Դարվեր քռի
քռի քռի »:

դարտակ = դարտակ — փայտէ փոքրիկ
խողովակ, որուն վրայ կը փաթթ ենմանծի թելը:

դդմիլ = դդմ + իլ — ըթամտանալ,
ապուշ լինել. « Դդմիլ քռի քռի քռի »:

դեղ — 1. դեղ. 2. թունաւորող նիւթ
(հեղուկ կամ կարծր):

դեղել — թունաւորել:

դեղնուց = դեղին + ուց — ձուի կամ
հաւկթի դեղին մասը:

դողցնել -- ջերմով տառապել, տենդ
ունենալ. « յ^օժէն զբ րդւս րդցն^օ յէ: »

դողդղալ — ցրտէն դողալ:

դողացկան — 1. դողացող, 2. երկ-
չտա, ամէն բանէ վախցող:

դրչոց դնել — ապրցուն (ոսպ, լուբիա,
սիռեռ, եւն) ջուրին մէջ թողուլ եփելէն քանի
մը ժամ առաջ. թրջոց դնել:

դիիել — լաւ մը ծեծել (անձ մը). « Կէ-
ժ-դիեբլ լւս յէ րդիեբլ րդւս: »

Է.

ելանի — թեւերով զգեստ մը, որ մինչեւ
գօտին կը հասնի եւ զոր ո՞չ ո՞րէն տակէն կը
հագնին:

եղկըցնել — քիչ տաքցնել ո՞ր եւ է ո՞չ
կարծր նիւթ:

երկիրմար = երկիր + մար. — թրթուր:

եղկուկ = եղկ + ուկ — քիչ տաքա-
ցած (կրակի վրայ կամ արեւուն մէջ) ջուր
կամ հեղուկ:

եղլի = եղ + լի = իւղ-ա-լի — իւղոտ:

եղկիլ = եղկ + ուկ + իլ — ջուր կամ
հեղուկի քիչ տաքանալը:

եղուկ = եղ(կ) + ուկ — նոյն նշանա-
կութիւն քան եղկուկ:

եմանի — կօշիկ, շատ գաւառներու
յատուկ առանց կրունկի թեթեւ կօշիկ:

երգ — բառս կը գործածեն միայն ազգային երգերու համար, մնացածները հայերէն եւն կ'անուանին:

երվընալ = երվըննալ = երուընալ = երեւնալ. — երեւիլ:

յէ.

յետ — 1. ետ. 2. ետեւ. “յէր քննի, յէր նոյն”:

յետինք — կէսօրէն յետոյ՝ երեկոյեան դէմ օրաբաժին:

յետնաշխարք — աշխարհի վերջը՝ վախճանը:

յերթ = յարդ (սաման):

յերազ = երազ:

յերեկ = երէկ:

յերկան = երկան = երկայն, երկար:

յերկննալ = երկայնանալ. — 1. երկարիլ. 2. ճամբայ ելլել եւ առաջ գնալ. 3. երկար տեւել ուրիշ բանի:

յերվան = երեւան, երեւումն. “յերէն նոյն յերվան ելն”:

յերի = յեր = եր = երբ:

շ.

Չամպիլ = զամպիլ = զամբիլ = զամբիւլ = զամբիւղ. կայ նաեւ

զամպիղ՝ նոյն նշանակութեամբ:

զիւան = զեան. — վնաս, կորուստ.

“զիւան զննի. զիւան իննի”:

զլխթի — շարաբարոյ, գէշ, անառակ.

“ շիւթի յո՞ր էիք: ”

զնկոտալ — 1. ակռաներու իրար ծեծելը ցրտէն. 2. կը նշանակէ նաեւ շատ մը բնական ձայներ, որք նոյն հնչումը ունին:

զոնեխ — 1. ճախարակի երկաթէ ճաղին վրայ գտնուած ատամնաւոր փայտէ մասը. 2. տեսակ մը բոյս:

զրզօփ — թեթեւօլիկ, թեթեւաբարոյ. “ շիւթի յո՞ր էիք: ”

զրունցել — զրոյց + ել — զրուցել, խօսիլ. “ շիւթի յո՞ր էիք: ”

զօրաթա — լըջօրէն (կռուի՝ բարկութեան մէջ), հակադարձն է “ իջօրէն ” ին. միշտ կը հարցնեն “ իջօրէն ո՞ր ո՞ր շիւթի ո՞ր ” — կատակ է թէ լուրջ:

է.

էլալ — էլլալ = ելա(նե)լ — ելել:

էնէլ = ընել = առնել — գործ մը կատարել, շինել. “ շիւթի յո՞ր էիք: ”

էվէլ = աւել — 1. աւելի, աւելորդ. 2. առաւել. “ էվէլ ոչ ոք չէր: ”

էվնալ = աւելանալ. — աւելնալ, մնացորդ թողուլ:

էվնորթ — մնացորդ, մնացած, աւելցուք:

էվցուք — մնացորդ, մնացած, աւելցուք:

էրթկրտալ = երթկրտալ. — յօրանջել. անօթի, յոգնած եւ քնոտ մարդոց բան կը համարուի:

էրէս = երես. 1. երես մարդու. 2. յանդգնութիւն, համարձակութիւն:

էրէս առնալ — համարձակութիւն գործածել, շփացած կերպով վարուիլ:

էրէս ելալ — շփանալ, համարձակութիւն առնել:

էրէս տալ — շոյել, գգուել, քաջալերել:

էրէսկինն = երեցկինն — կին քահանայի:

էրնէկ = երնէկ = երանի. «էրնէկ իւրն» երանի քեզ:

էրնւլալ = էրննալ = երեւնալ՝ թերակատար գործողութիւն կը ցուցնէ. «լուսնիւն իւրնէն» կը սկսի երեւալ:

էրվալ = երեւալ = երեւիլ՝ կատարեալ գործողութիւն կը ցուցնէ. «լուսնիւն էրվոյն» լուսինը երեւաց:

Է.

Էհրնա — ահաւասիկ:

ըհրնաքա — ահաւասիկ:

ըղունկ = եղունգ. «ըղունկերդ իւրնէն»:

ըմա = ըմ՝ մա = թք. ամմա — բայց, սակայն:

ընչաք — մինչեւ. «ընչոյ յո՞րն» կայ նաեւ ինչոյ, ինչոյ:

ընտոր = ինտոր. — ինչպէս. «ընտոր տէնէն» կայ նաեւ ինտոր:

ըռաստ գալ = սաստ գալ. — պատահիլ, հանդիպիլ. «էն իւրն ըռաստ էնոյ ընչոնն»:

ըռատ = առատ. « ըռոտ ըռոտ: »

ըռատութիւն = առատութիւն. — 1. շատութիւն, յորդութիւն. 2. արմատեաց շատութիւն՝ հակադարձ երաշտութեան:

ՅԵ.

յըյնիւ = յըկնիւ = անկնիւ = անկանել — իյնալ. « շըշընիւ յըշընիւ եղիւ որ շըշընիւ: »

յընծի = ինծի = ինձ. « յընծի ինչ. յընծի ընելի՛ս յընձի՛ս: »

յընկաճ = ընկաճ = անկաճ = ականջ. « յընկաճ քաճ: »

յընկէր = ընկեր. — ընկեր՝ (ընդ-կեր = լա. cum-panis, Ֆր. com-pan(gn)on, compagnon) ուրիշի մը հետ միասին:

յընկող = անկանող — իյնող. « յընկող (կամ յընկող) յորդանան վն շըշընիւ: »

յընկողին = ընկողին = անկողին. « յընկողին յիշիցի: »

յըսլա = ըսա = ասա — ի հարկէ (հարկաթ), ասա:

Ը.

Թաթախ = թաթախեալ. — թրջած, խիսմած:

Թաթիկ = թաթ + իկ. — փոքր ձեռք. մանկական բառ՝ ձեռք:

Թալմիս = թալ + միս. — մսի մէկ տեսակը. այն ուր միսը շատ է:

[Թաղիք — որոճող կենդանիներու փորոտեաց մի մասը:

[Թան — շիճուկ. կարագէն զրկուած կաթ:

[Թառ — օդին մէջ կախուած (երկու ծայրէն շուաններով) փայտի կամ տախտակի կտոր, որուն վրայ կ'ելեն հաւերը գիշերելու կամ հանգչելու, կը [Թառին:

[Թառիկ — հաւերու [Թառ բարձրանալու գործողութիւնը:

[Թարախ — վէրքի առաջանալէն՝ արեան ապականած եւ գունատած մասը:

[Թարթնել = [Թարթիչները բանալ եւ գոցել:

[Թարթինչ = [Թարթիչք:

[Թացխխում = բոլորովին [Թրջած. «բռնիս բռնիս Բոյ Ինքն էլ»:

[Թափ[Թփած = անուշադիր, [Թափած, աղտոտ:

[Թեր = կողմ, կոյս:

[Թեր էլլալ — 1. կողմնակից՝ կուսակից լինել. 2. պաշտպանել. «Դուն Դ ինքն է Դ ինքն էլլալ. Դուն էլ ինքն էլլալ»:

[Թերխաշ = [Թեր + խաշ. — կէս խաշած, կէս եփած:

[Թնփ — բուսահատիկներու վրայի բարակ մաշկը:

[Թէպուր = [Թէփուր = տէփուր = փետուր:

[Թ[Թմիլ — 1. [Թ[Թու համ առնել՝ տալ. 2. երեսը ծակամակել. «Երէն ինքն էլ»:

[թթուաշ — [թթու համ ունեցող ուտելիք կամ ըմպելիք:

[թթվիշողիկ = [թթուի + շողիկ — քաղցր եւ [թթու համերն իրար խառնուած:

[թթուկիշ կամ [թթրկիշ — կանաչ խոտ մը՝ բամպուկի նման՝ շատ [թթու եւ խիստ համեղ:

[թթոուս կամ [թթրուս = [թթու + ոուս — սալորէ շինուած ոուս, որ սաստիկ [թթու է եւ զոր ժողովուրդը ամբողջ տարին կը գործածէ [թթուի՝ լիմոնի տեղ:

[թի — [թի, [թիակ. «էբի-թի, գ-թի»:

[թիս — որովայնէն արձակուած փութ. «թի-ն: Գ-թի-ն ըն-թի-ն»:

[թիփի — հովախառն սաստիկ ձիւն տեղալուն կ'ըսեն «թի-թի-թի-ն: Ե-թի-ն: Ե-թի-ն: Ե-թի-ն»:

[թլքիլ — մրգեղէններու աւրուիլը. «թլ-թ ինչ-թ. Թլ-թ յի-թ-ն»:

[թնճութ — սանտրուելէն յետոյ սանտրի վրայ մնացած մաղերը:

[թոլ = [թոյլ — «լ-թ-ն թ-ն. Թ-ն. Թ-ն. Թ-ն»:

[թոլ = գոլ = գոյլ — մասնաւոր գոլումէ շինուած աման՝ ջուր քաշելու կամ լուացքի ու բաղնիքի մէջ գործածելու համար:

[թոլնալ = [թոյլ-ա-նալ = [թուլանալ — 1. [թոյլ դառնալ. 2. գործի մէջ եռանդը կորսնցնել:

[թու[թ — ճերմակ եւ շատ համեղ պտուղ մը, որ Արարկիրցւոյ սնունդին մէկ կարեւոր մասը

կը կազմէ, վասն զի զայն թէ՛ թաց (հասուն եղած ժամանակը) կ'ուտեն եւ թէ՛ շորցուցած. անկէ կը շինեն՝ Գ՝՝՝ԻԻ, Գ՝՝՝ԻԻ, Գ՝՝՝ԻԻ, Գ՝՝՝ԻԻ, Գ՝՝՝ԻԻ եւ ուրիշ հազար ու մէկ տեսակ քաղցրեղէններ. զայն կը շորցնեն եւ ձմեռը կ'ուտեն. անկէ կը հանեն աննման օղի: Թ՝ԹԻ քանի մը տեսակները կան եւ որոշ անուններ ունին. կայ կորիզաւորը (Ի՝՝՝ԻԻ) եւ անկորիզը (Ի՝՝՝ԻԻ), վերջինս ամենա-յարգին է եւ կը գործածեն աւելի նուրբ պէտ-քերու. մինչ առաջիններէն (որոնք շատ շատ են յԱ-րաբկիր) կը պատարաստեն շղին, Գ՝՝՝ԻԻ եւն:

Թուխ = Թուխս — ձագ հանող հաւ:

Թուխ դնել — հաւկիթներ դնել հաւու մը բոյնին մէջ՝ ձագ հանելու համար:

Թուխ նստիլ — ձագեր հանելու համար հաւուն հաւկիթներու վերայ նստիլ:

Թսալ — տքնիլ, դժկամակիլ:

Թսթել — փուքս արձակել յորովայնէ:

Թսթսալ — տքնիլ՝ աւելի ծանր կերպով:

Թրիք — ձիու, կովու, իշու աղբ:

Թրմիլ = Թմիլ:

Թօիթի = Թօի + Թի = Թք. Թօի + Լու — գնդասեղ:

՜.

Ժամժ = ժամ = * շամ = շարժ — սկզբնական շարժը վերջինին զօրագոյն աղգեցու-թիւնը կրեր է. բառս կը նշանակէ երկրաշարժ (= երկիր + շարժ = շարժումն երկրի): «Գ՝՝-

չէր՝ թօժ էլն՝ : Անիննահանգին մէջ նոյն միտքը կ'արտայայտէ թօժի բառը :

Ժամ՝ = եկեղեցի. « Ժամն Գրքն, Ժամ թմբ, Սո՛ւրբ Գրքո՛ւմ թմբն » եւն : Ժամ բառը մնացած է շատ մը գաւառաբարբառներու մէջ « Ելեղեցի » նշանակութեամբ. սա շատ հին եւ հետեւանք է վաղեմի սովորութեան մը եւ ծագած է գուցէ « թմբն » = ժամ + սացութիւն (եկեղեցական աղօթք — արարողութիւն) բառէն, որու երկրորդ մասը անհետանալով մնացած է թմբ բարդին նշանակութեամբ. եւ արդէն Լատիներէն Horae՝ Ժամեր՝ (եղ. Hora) եկեղեցական ընթերցուածք, Horae diurnae ցերեկուան ժամեր՝ ժամերգութիւնք, հայերէն բառս բաւական չն՝ լուսաբաններ :

Ժամվոր = ժամ-աւոր — եկեղեցի գնացող, եկեղեցիէն վերադարձող :

Ժամնիքը կախսել — դէմքը փոխել դէպ ի տխրութիւն կամ տգոհութիւն (Bouder). « Երբեքն լընն գէն թնիքը ինն » :

Ժժուանք — մղձաւանջ : քանի որ շրջը Արարկիբի թօժը եւ շատ մը գաւառաբարբառներու թօժը եղեր է, թօժը դիւրութեամբ կրնայ փոխուիլ * թէ՛ ի՛ յետոյ թէ՛ ի եւ վերջապէս թէ՛ ի = շրջի. ուստի թթնն = ժժ + ուանք. իսկ թթնն յոգնակերտ մասնիկ մը լինելով (ինչպէս Թեւ՝ Թեղվանք = Թեղուանք, Իրբ՝ կտորվանք = Իրբուանք եւն) կ'ունենանք թթ (= շարժ) + թթնն = * շարժուանք այսինքն՝ հասարակ յոգնական ձեւով՝ շրջ(ուանք)ի :

Բառիս նշանակութիւնը արդէն աւելի քան նպաստաւոր է բացատրութեանս. քննելիք է նշանակէ՝ տարուբերեալ, շարժուն, յուզեալ քուն, համապատասխան է գաղղիացւոց Cauchemar (= պարզ ոճով *Sommeil agité*), Լատինաց *incubus*, *oppressio nocturna* կամ *lubidria Fauni*, Յունաց *ἐφιάλτης*, *επιβολή*, *πνευγαλιών* բառերուն: Ուրեմն՝ մենք կը կարծենք թէ քննելիք է (=*շարժուանքին*) կը նշանակէ քնոյ մէջ՝ այլեւայլ աղղեցութեան տակ՝ զանազան անհաստիք երեւոյթներն (երազներն), անհաստութիւններն, շարժումներն եւն: Ժ. քննելիք է քննելիք է Վանի բարբառով կը նշանակեն ինչ, այսինքն տերեւներէ, փոքր ստերէ, թղթերէ բաղկացած՝ հովէն եւ քամիէն տարուբերուող նիւթեր կամ աղտոյնութիւններ. այս զուգագիպութիւնը կը հաստատէ մեր՝ քննելիք է քննելիք միեւնոյն ծագումն ունենալուն վրայ ըրած ենթադրութիւնը:

ժմնել = ժամ + նել = ժամ + ա + նել. — ժամանել, հասնել ճիշտ ժամանակին.
 * քննելիք է քննելիք է քննելիք է քննելիք է:

ժում = ժամ, * ժրմ — 1. ժամանակ վայրկեան, ատեն. 2. անգամ, հեղ (կերակուրի համար). * քննելիք է քննելիք է քննելիք է քննելիք է:

ժոն գալ = շուռ գալ — պտտիլ, ման գալ. * քննելիք է քննելիք է քննելիք է քննելիք է:

ժրժրալ — բնական ձայն կամ բնութեանէ առնուած ձայն՝ jř, jř.

է.

իլիկ — 1. կոճակի ծակ. 2. մարմնոյ ներքին անդամ, ողնաշարի ծուծ, ողնաշարի ոսկր:
 Իմաստալ = իմաց տալ — իմացնել, լուր տալ. կայ նաեւ յիւստիս:

ինչաք, ինչէօք, ինչուք, կան նաեւ մինչաք, մինչէօք, մինչուք, մինչեւ, ց—, Ի—, Ե— . « Ինչու՞ յո՞ր է՞ք: Ինչու՞ է՞ք »

իշուկոնսկ — բոյս որ ցորենի եւ ընդհանրապէս հացահատիկներու մէջ կը գտնուի եւ իշու կոնակին շատ նման է:

իշվասք = իջուածք. — 1. ուռեցք մարմնոյ մի մասին. 2. կաթուած, կաթուածահար:

իշտա՞ք = թք. էշէ, ահա, ահաւասիկ:

իշտա՞քա՞ = թք. էշէ, ահա, ահաւասիկ:

Խպի պումբ! կամ պարզապէս՝ պոմբ!

1. բացադանչութիւն, պահուող մէկը յանկարծ գլուխը գուրս կը հանէ եւ կը պոռայ « Խպի պումբ! » 2. բուերուն սեփական կանչումը կամ երգը:

իք { յարաբերական՝ միեւնոյն նշանակու-
 թիւն ունեցող՝ երեք բառեր, որոնք ի-
 քքը { բարու տեղ կը գործածուին. եւ կը
 ինքը { գրուին այն բառին տեղ զոր խօսողը
 չի յիշեր. « Իքք = (բանը), Իքք... յո՞ր է՞ք »

յի.

յինստ — 1. հակառակող. 2. պնդագլուխ, յամառ:

յինքը = ինքը, ինքն, — ինք. (lui, elle).

“ Ենք և ց ” :

յիշանստան — իւղով, մեղրով եւ նշաստակով շինուած կերակուր :

յիրենն = իր + են = իւր + եան. իրեն, իրան (à lui, à elle).

յիրիկունն = երեկոյ — 1. իրիկուն, 2. մութ. Երիկունն էլ — = մթնեց :

Լ :

լագ — 1. համր. 2. Լազ ազգը. “ Բէկէկ և Լ — Լ ” Գէորգը համր է :

լագիրկո — 1. համր, թլուատ, թոթով. 2. օտար լեզու խօսող. 3. բան չհասկցող. բթամիտ. “ Լ — Լ ” Ենք և ց :

լան — համր, անխօս, բերանը բռնուած. “ Լ — Լ ” Ենք և ց :

լան — լաց լինել, արտասուել :

լանիկ — լակ — կեր՝ կերակուր ջրախառն անասուններու համար :

լանկան — կոնք. ձեռք լուալու աման :

լակոտ — 1. անհարազատ (որդի = batard) 2. անառակ. 3. զաւակ :

լանն — լայն — լայնութիւն ունեցող. լանքը՝ լայնութիւնը. լանալ՝ լայնանալ :

լանկան — պղնձէ կամ հողէ պնակ :

լանջանք — ճերմակ լաթ, որով ծեր կիները գլուխին կը կապեն :

լար — 1. Ճախարակին անիւը երկաթէ ճաղին հետ յարաբերութեան մէջ զնող չուանը:
2. չուան:

լաւաշ — նոր եւ ազնիւ հաց՝ բարակ եւ երկայն:

լեզու էլալ = լեզու ելլել — 1. երեկոյին խօսիլ սկսիլը. 2. լուսթենէ յետոյ յանկարծ խօսիլ սկսիլն. « Բէր շաշ լեզու էլալ »:

լեղվընալ = լեղեանալ. — լեղի համստանալ. « Բաշ լեղեանալ »:

լեփլեցուն = լեփ + լեցուն. — բոլորովին լեցուն, լեփն. « Բաշ զօրացուցիչ է »:

լգել — լեզել, լեզուլ:

լգվոտել — 1. իրարու վրայ լեզել՝ արագ արագ. 2. զերար լեզել:

լինտ — լինդ. յթ. լեթեր:

լըլալ կամ լալ կամ լալ = ընուլ, լեցնել, վրան աւելցնել:

լսկիլ — պտղոց չափազանց հասունանալը. « Բաշ լսկիլ լեթեր »:

լսկիկ — պտուղներու չափազանց հասունցած վիճակ. « Բաշ լսկիկ լեթեր »:

լկտի — շփացած, երես առած, անամօթ, աներես:

լըրճուք կամ լըրճուք — պժգանք ազգող. նողկալի:

լող — գլանաձեւ խոշոր քար՝ որով տանիքները կը լողեն՝ հողը ամրացնելու համար. կ'անուանուի նաեւ լողք:

լող — լողալու արհեստը՝ գիտութիւն.

“ Լող քնէ՞նք . Լող քնէ՞նք՝ լողալ իմանալ :

լողալ — 1. ջրի մէջ զանազան շարժումն ներով առաջ գնալ. 2. ո եւ է նիւթին ջրի երեսը բարձրանալը :

լողել — լողաբարը տանիքներուն վրայ տարուբերել. “ Էլ քնէ՞նք Լող ” :

լողիատ — սքծանաձեւ փայտեայ գործիք, որով լողաբարը շարժման մէջ կը դնեն ու կը լողեն :

լուսունկա = լուսին, լուսնկայ :

լիռլիռ — բնութենէ առնուած ձայն. կերակուրի եփած ժամանակ հանած ձայնը :

լիռտալ — կերակուրի սաստիկ եփած ժամանակ հանած ձայնը :

Ի.

խաղ — 1. սպար, կաքաւ. 2. խաշ (Jeux) :

խաղալ — 1. սպարել. 2. խաղալ ո եւ է խաղ. “ -- լըյտը : Էլ Իյնը Իլըլ . :

խաշիլ — 1. տեսակ մը կերակուր՝ ալիւրով եւ իւղով շինուած. 2. ալիւրէ նօսր զանգուած, որուն մէջ կը թաթխեն հնձը :

խաշիլ — խաշիլի մէջ թաթխել մանածը :

խաշերկաթ — խաշաձեւ երկաթ, զոր կրակին վրայ կը դնեն եւ վրան՝ կերակուր եփելու ամանները :

խավող = խաղող :

խաւիծ — ալիւրով եւ իւղով շինուած նօսր կերակուր :

խափափանք = խափան ք — վերէն վար գոցուող դուռ. ո եւ է մեծ կամ փոքր բացուածքի բերանը գրուած արգելք. « Խճճճճ Խճճճճ » :

խելուկ = խել քուկ. — խենթուկ, խելքէն քիչ մը պակաս :

